**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

# ՀՐԱՄԱՆ

"18" դեկտեմբերի 2023 թվական N 914-Հ

**ք. Երևան**

## «ՕՐԲԻՏ Ա» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «ՕՐԲԻՏ Ա» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 00897706, գործունեության հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Լուսավորության 1/1) (այսուհետ՝ նաև ընկերություն) միջև 2020 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-20/04» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) համաձայն, ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական» աշխատանքներ՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով ներկայացված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրի:

Համաձայն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի՝ պետք է մինչև 30.06.2021 թվականը՝ երկրորդ փուլի և մինչև 30.11.2021 թվականը՝ երրորդ փուլի արդյունքները, որոնք փաստացի չեն կատարվել:

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2020 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-20/04» գնման պայմանագրի 2.1.5-րդ կետի ա) և բ) ենթակետերը, 2023 թվականի դեկտեմբերի 14-ից միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը:

Հաշվի առնելով, որ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և 2-րդ մասի դրույթները՝

«ՕՐԲԻՏԱ Ա» փակ բաժնետիրական ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

12/18/2023

X

ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Signed by: MELKUMYAN NAREK 3114850200

ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ